ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60,էլ հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

03.11.2016թ.
305-ի 8

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ **պարոն Մարտին Սարգսյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

2016թ.-ի նոյեմբերի 1-ից ՍԴՈ-1256 որոշումով ուժը կորցրել է “Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին” ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով չեն նախատեսել տարբերակված մոտեցում մարդու՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքի և հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքի իրականացման երաշխիքների ապահովման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե ինչ կարգավորում (այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների տեսքով) է նախատեսվել ի կատարումն ՍԴ որոշման՝ մարդու՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքի և հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան